Հաստատված է
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2017 թվականի մայիսի 12-ի նիստում,
արձանագրություն N 8,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
_____ Կ. Լ. Աթոյան
«12» _____ 2017 թ.

ԿԱՐԳ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը մշակված է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) կանոնադրության[1], ՀՊՏՀ 2016-2020 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի[2] և «ՀՊՏՀ» ՊՈԱԿ գիտական խորհրդի կանոնակարգի[3] հիման վրա, ՀՊՏՀ որակի ներքին ապահովման հայեցակարգին համահունչ ու ելակետային սկզբունքների պահպանմամբ[4]:

2. Կարգով սահմանվում են համալսարանում կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների իրականացման փուլերը, այդ փոփոխությունների արդյունավետության գնահատման գործընթացի կազմակերպումն ու իրագործումը:

---

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 15-ի N 1436-Ն որոշում:
[2] Հաստատված է «ՀՊՏՀ» ՊՈԱԿ խորհրդի 2016 թվականի հուլիսի 15-ի նիստում:
[3] Հաստատված է «ՀՊՏՀ» ՊՈԱԿ գիտական խորհրդի 2015 թվականի սեպտեմբերի 30-ի նիստում:
[4] ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկ / Պարույր Քալանթարյան, Ներսես Գևորգյան, Գայանե Մերդինյան, Աննա Փախլյան, Գագիկ Աղաջանյան, Մերի Դալլաքյան, Գրիգոր Նազարյան, Կարեն Գրիգորյան, Ռուբեն Հայրապետյան, Արմեն Բուդաղյան, Եր., ՀՊՏՀ հրատ., 2013, 104 էջ:

3. ՀՊՏՀ կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետության գնահատման կարգի նպատակն է՝

- աջակցել համալսարանի որակի ներքին ապահովման համակարգի գործարկմանն ու համապատասխան ընթացակարգերի կիրառմանը,
- նպաստել կրթության որակի շարունակական բարելավմանն ու համալսարանում որակի մշակույթի զարգացմանը:

4. Կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետության գնահատումն իրականացվում է՝ ելնելով համալսարանի գործունեության ուղղություններին (ուսումնական, գիտահետազոտական, ֆինանսատնտեսական, կառավարման և վարչարարության, միջազգային, սոցիալ-մշակութային) բնորոշ առանձնահատկություններից և յուրաքանչյուր գործընթացի շրջափուլից՝ ըստ փոփոխության իրագործման համար առաջադրված նպատակի կատարման չափանիշների, ցուցանիշների և ցուցիչների:

5. Սույն կարգում օգտագործվող հասկացություններն են.

- Որակ՝ համարժեքություն սահմանված նպատակին:
- Որակի ապահովում՝ բուհի կամ կրթական ծրագրի որակի գնահատման, վերահսկման, պահպանման և բարելավման շարունակական գործընթաց:
- Որակի մշակույթ՝ որակի համընդունելի և ինտեգրված սկզբունքների համակարգ, որը բնորոշ է բուհի կազմակերպական մշակույթին կամ կառավարման համակարգին:
- Որակի շրջափուլ՝ պլանավորում և փաստաթղթավորում, իրականացում, գնահատում, բարելավում (ՊԻԳԲ շրջափուլ):
- Գնահատում՝ բուհի կամ ծրագրի որակի համակարգված և քննախույզ վերլուծության գործընթաց, որը հանգում է բուհի կամ ծրագրի վերաբերյալ եզրակացությունների և (կամ) երաշխավորությունների:
- Չափանիշներ՝ մակարդակի էտալոնային կողմնորոշիչներ, որոնք բնութագրում են որոշակի խնդիրների և (կամ) չափորոշչի իրագործման աստիճանը:
- Ցուցանիշներ՝ որևէ կարգի գործունեության՝ զբաղմունքի և այլնի արդյունքներն ամփոփող տվյալ կամ տվյալների ամբողջություն:

- Ցուցիչներ՝ առաջադրված նպատակի կատարման քանակական և որակական բնութագրիչներ:
- Շահակիցներ՝ համալսարանի գործունեության ուղղություններին առնչվող շահագրգիռ կողմեր:

II. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՆ ՈՒ ՓՈՒԼԵՐԸ

6. Համալսարանում կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների իրականացման փուլերն են.

6.1. Փոփոխությունների կատարման հիմնավորում և համապատասխան վերլուծությունների իրականացում:

Հիմնավորումը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը՝

- ընթացիկ իրավիճակի բնութագրությունը, առկա խնդիրները, առաջարկվող լուծումները,
- փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը,
- առաջարկվող փոփոխությունների նպատակը և բնույթը,
- հավանական ռիսկերը և ենթադրվող հետևանքները,
- իրականացվելիք փոփոխությունների մոտավոր ժամկետը,
- ակնկալվող արդյունքը:

6.2. Փոփոխությունների նախագծի կազմում:

Նախագիծը մշակելու պարտականությունը կրում է կառուցվածքային այն ստորաբաժանումը (այսուհետ՝ պատասխանատու ստորաբաժանում), որի՝

- ղեկավարի կողմից տրվել է փոփոխության նախագիծը մշակելու հանձնարարական (այն ստորաբաժանումը, որը նախաձեռնել է այդ փոփոխությունը) կամ
- տվյալ փոփոխությունն առնչվում է գործառույթներին կամ վերապահված լիազորությունների շրջանակներում իրականացվող գործունեությանը:

Փոփոխության նախագիծը կազմելուց հետո պատասխանատու ստորաբաժանումը այն ներկայացնում է համալսարանի իրավաբանական ստորաբաժանմանը

(այսուհետ՝ իրավաբան) փորձաքննության, անհրաժեշտության դեպքում՝ փոփոխությանն առնչվող կառուցվածքային համապատասխան ստորաբաժանումներին՝ համաձայնեցման: Եթե փոփոխության նախագիծը նախատեսում է ֆինանսական բնույթի պարտավորություններ կամ իրավունքներ, ապա այն ներկայացվում է նաև համալսարանի հաշվապահական հաշվառում իրականացնող ստորաբաժանմանը (այսուհետ՝ հաշվապահ): Նախագծին կից անհրաժեշտության դեպքում կարող են կցվել փոփոխությունների իրականացման համար հիմք դարձած ֆինանսատնտեսական հաշվարկները, վիճակագրական տվյալները, այլ փաստաթղթեր կամ ներկայացվող նախագծի հիմնավորման համար անհրաժեշտ այլ տվյալներ: Դրանք ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ստորաբաժանումներն իրենց առաջարկությունները և դիտողությունները ներկայացնում են պատասխանատու ստորաբաժանմանը:

Փոփոխությունների նախագիծը, նախքան դրանք ընդունող մարմնի հաստատմանը ներկայացնելը, պատասխանատու ստորաբաժանման կողմից շրջանառվում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների հետ համաձայնեցնելու և կարծիքներ ստանալու նպատակով: Եթե իրավաբանի կողմից նախագծի վերաբերյալ ներկայացվել են առարկություններ ու դիտողություններ, ապա դրանք պետք է քննարկվեն և դրանց արդյունքներով նախագծում կատարվեն համապատասխան փոփոխություններ՝ մինչև նախագիծը կարծիքների ուղարկելը: Պատասխանատու ստորաբաժանումը նախագծի վերաբերյալ առաջարկությունները և դիտողությունները ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում լրամշակում է փոփոխությունների նախագիծը՝ անհրաժեշտության դեպքում առաջարկությունների հեղինակների հետ կազմակերպելով աշխատանքային քննարկումներ:

Նախագծի լրամշակված տարբերակը կրկին ներկայացվում է իրավաբանի, նախատեսված դեպքերում նաև հաշվապահի համաձայնությանը: Վերջիններս նախագիծը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում են այն պատասխանատու ստորաբաժանմանը:

6.3. Փոփոխությունների նախագծի հաստատում և իրականացում:

Պատասխանատու ստորաբաժանումը փոփոխության նախագիծը, այդ թվում՝ իրավաբանի, նախատեսված դեպքերում նաև հաշվապահի փորձագիտական եզրա-

կացությունների հետ միասին ներկայացնում է համալսարանի գիտական խորհրդին կից ստեղծված համապատասխան հանձնաժողով՝ ելնելով առաջարկվող փոփոխության առանձնահատկություններից: Հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում փոփոխությունների նախագիծը ներկայացվում է համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը:

Համալսարանի ռազմավարական զարգացմանն ուղղված փոփոխությունների նախագծերը քննարկվում են և շրջանառվում նույն ընթացակարգով ու ներկայացվում ՀՊՏՀ խորհրդի հաստատմանը:

III. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

7. Կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետությունը գնահատում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ ստեղծված համապատասխան հանձնաժողովը, իսկ ողջ գործընթացը համակարգում է որակի ապահովման բաժինը՝ ըստ հետևյալ չափանիշների՝

- կատարված փոփոխությունների համապատասխանությունը ՀՊՏՀ առաքելությանն ու ռազմավարական նպատակներին,
- նախատեսվող գործողությունների և անմիջական արդյունքների կատարողականությունը,
- կատարված գործողությունների և ստացված արդյունքների արդյունավետությունը,
- իրականացված գործողությունների երկարաժամկետ ազդեցությունը,
- ապահովված դրական փոփոխությունների կայունությունը:

Արդյունավետության գնահատման ցուցիչների համակարգը (մուտքային, ընթացքի, ելքային) ընտրվում է և սահմանվում գնահատման ամեն մի գործընթացի համար՝ ելնելով նախատեսվող փոփոխության առանձնահատկություններից:

8. Կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետության գնահատման արդյունքներն օգտագործվում են համալսարանի ղեկավարության, որակի ապահովման բաժնի, կառուցվածքային այլ ստորաբաժանումների

կողմից՝ որոշումներ կայացնելիս, ամփոփ վերուծություններ պատրաստելիս, ներքին և արտաքին շահակիցներին հաշվետվողականության և այլ նպատակներով:

9. Կրթության որակի ապահովմանն ուղղված փոփոխությունների արդյունավետության գնահատման կանոնավոր կիրառումը թույլ կտա ապահովել որակի ապահովմանն առնչվող բազմակողմանի տվյալների ժամանակին հավաքագրումը և տվյալների բազայի ամբողջականությունը, նաև նպաստել համալսարանում որակի մշակույթի շարունակական զարգացմանը:

IV. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

10. Սույն կարգը հաստատում, կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում համալսարանի գիտական խորհուրդը՝ համաձայն «ՀՊՏՀ» ՊՈԱԿ գիտական խորհրդի կանոնակարգի: